



Press Release

Ազգային Առաջնորդարան Ատրպատականի Հայոց Թեմի - Թաւրիզ
Armenian Prelacy of Azarbaijan P.O.Box: 51355-4455 TABRIZ - AZARBAIJAN IRAN
E-mail: arajnordan.tavriz@gmail.com Tel.: +98 41 355 535 32 Fax: +98 41 355 423 04

ԹԱՒՐԻԶԻ ՀԱՅ ՀԱՍՏԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ԱՅՑԵԼԵՑ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ

Ատրպատական, ազգային առաջնորդարան, Թաւրիզ - Երեքշաբթի 6 Օգոստոս 2019-ին, Ատրպատականի Հայոց թեմի առաջնորդ՝ Գերշ. Տ. Գրիգոր Ս. Եպս. Չիֆթեանը իր գրասենեակում ընդունեց Թաւրիզի Հայ Համալսարանականների Միութեան նորըն-



Սրբազան Հօր գրասենեակում, հանդիպման աւարտին

տիր Վարչութեան կազմին, որը եկել էր Սրբազան Հօր օրհնութիւնը ստանալ, իր ընտրութիւնից յետոյ:

Առաջնորդ Սրբազանը ողջունելով նորընտիր վարչութեան, որը գլխաւորում էր կազմի նախագահ Անահիտ Յակոբեանը, ընդգծեց համայնքի կեանքում կրթած երիտասարդութեան ապագայ ղեկավարի դերակատարութիւնը: Եօթ հոգանոց կազմը, առաւել անձնափոխանորդները, Միութեան աշխատանքներում կազմակերպական մեծ փորձառութեամբ յառաջ են տանում ակադեմական, ուսուցողական, մանկավարժական եւ ընկերական գործունէութիւն, տարբեր տարիքներում գտնուող համայնքայինների կեանքում փոփոխութիւն բերելու նպատակով:

Հանդիպման ընթացքին, Վարչութեան ներկայացրած յառաջիկայ ծրագրերի հիման վրայ, առաջնորդ Սրբազանը կատարեց որոշ թելադրանքներ եւ տւեց իր կարծիքը, աւելի մեծ թւով անդամներ եւ մասնակիցներ ներգրաւելու գծով իրենց հաւաքական աշխատանքներում:

Վարչութեան նախագահ Անահիտ Յակոբեանը բոլորի անունից շնորհակալութիւն յայտնեց Սրբազան Հօր, միշտ Միութեան կողքում կանգնած մնալու համար, եւ այն քաջալերանքին, որով կարողանում են հունաւորել իրենց նախածրագրած աշխատանքները:

Վարչութեան բոլոր անդամները իրենց պատկերացումները տւեցին, յատկապէս համալսարանական եւ համալսարանաւարտ անձերի ներկայութիւնից եւ գիտութիւնից օգտւելու մասին: Արծարծւած միւրերից էր նաեւ ուսուցողական-դաստիարակչական շրջագայութիւնները թեմի նախապէս հայաբնակ վայրերում, որտեղ դեռեւս կանգուն են հայրերի կառուցած հաւատքի տներն ու ուսումնարանները: